

18566

217

891.99

S-72

2/7

ԳՈՂ - ՆԱՌԱՆԵՐԸ


ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՄԼԿ ԱՐՄՐ

2 0 0 3



Հեղ. ԲԻԶԱՆԴ ՏԻԼԿԵՐԵԱՆ



35

1 9 2 8

ԳՐ. Ա. ՍՏԵՓԱՆԵԱՆ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ

891.99
S-72

891.99
5-72
այ"

26238-42

12

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՊՕՂՈՍ	Մահուհիի ամուսինը	55 տարեկան
ՄԱՔՐՈՒՂԻ	Պոզուսի կինը	40 տարեկան
ՄԱՐԿՈՍ	անոնց ծառան	30 տարեկան
ՍԻՐԱՆՈՅՇ	անոնց ծառան	25 տարեկան



1240

ԳՈՂ - ԾԱՌԱՆԵՐԸ
(ԿՍՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ՄԷԿ ԱՐԱՐ)

Բենը կը նեկայացնէ շեկ գարգառուած սենեակ մը, բե-
մին ձախ կողմը պահաւան մը նոյնպէս պատէն
կախուած քէլեֆօն մը:

ՏԵՍԻՎ Ա.

ՄԱՐԿՈՍ ԱՌԱՆՁԻՆ

Մարկոս (ձեռքը սեղանին գարնելով կ'աւելցնէ)

Անուն ունիմ համբաւ չունիմ,
Ուր որ երթամ պատիւ չունիմ:

(սխալաբար) ինչ բնեմ, նստիմ լամ քանի որ Աստուած
այսպէս գրած է ճակատիս վրայ, պէտք է որ այնպէս ըլ-
լայ: (նոյն միջոցին ժամը 10ը կը զարնէ) Եղբայր, ժամը
10 կը զարնէ դեռ մեր միւսինները պիտի արթննան. կե-
րեւի թէ այսօր կէսօրուայ ճաշը քնոյ մէջ պիտի կա-
տարեն: (յանկարծակիի եկած) Աստուած չընէ հա՛...
չըլլայ թէ անանկ հրաշալիք մը գործեն. այն ատեն
միւսը ինծի է ոչ թէ անոնց, արդէն առածս ինչ է որ,
ոսկի մը կ'աւտան հողիս ալ միտսին կ'աւունեն, գործ չունիս
նէ առտունէ մինչև երեկոյ սենեակ աւլէ, սենեակ շտկէ,
սենեակ դնա, սենեակ եկուր, սենեակը տար, սենեակը
բեր... Է՞՞՞ քաշուելիք բաներ, ինչ ամմա, կեցէք նա-

9731

ինք ծայրէն ինչ գորս պիտի գայ... (Կ'սկիւի պսսիլ) Կի-
մա սիկնոջս արթննալուն ժամանակն է, երթամ թէլը
պատրաստեմ (հազիւ երթալու կըլլայ նոյն միջոցին քե-
լիճօնը կը ձայնէ) Մարկոս ետ գառնալով թէլէՖօնը ձեռք
կ'առնէ: (Նոյն միջոցին ալ Տիկին վալանդին գուրսէն
կը կանչէ)

ՎԱԼ. Մարկոս... Մարկոս...

(Մարկոս քիեճօնով զբողած բլլալով) ալօ... օ... օ...

ՎԱԼ. (գուրսէն) Ծօ՛՛ անպիտան, քեզի եմ պիտի
գա՞ս թէ ոչ...

ՄԱՐԿ. (գլուխը օտօրելով) Ա՛չ, օրիորդ, այսօր չի
պիտի կրնամ գալ որովհետեւ շատ գործեր ունիմ կա-
տարելիք...

ՎԱԼ. (բարկութեամբ գուրսէն) Եկու՛ւր կ'ըսեմ, ծօ'...

ՄԱՐԿ. Այօ... ի՞նչ ըսիք...

ՎԱԼ. (գուրսէն) Եօյի շիդ քէօը ըսինք. խայտա-
ռակ մարդ, այլեւս չափը սահմանը անցուցիք գո՛ւք...

ՄԱՐԿ. Այո՛, այո՛, այդ մասին տենող եղէք, վա-
ղը առաւօտ արկինէս գօնժէ առնելով կը նասնիմ որոշ-
եալ ժամադրաւայրը... ուրեմն կը ներէք ինձի... ցը-
տեսութիւն... (ուրախութեամբ) Ե՛հ, Ե՛րբան ուրախա-
լից...

Տ Ե Ս Ի Լ Բ.

ՎԱԼ. (Ներս կը մտնէ Տիկին վալանդին. բարկու-
թեամբ ընդմիջելով խօսք) Ծօ՛, խայտառակ ի՞նչ գործ ու-
նէիր հոս...

ՄԱՐԿ. (յանկարծալիի ելլած) հոս Տիկին... (զը-
լուխը ետելով) Օրիորդին թէլէՖօն կ'ընէի...

ՎԱԼ. Երբ որ կը պրտայի կը կանչէի, ինչ՞ու չէիր
ձայնէր...

ՄԱՐԿ. Ներողամբտ կըլլաք. սակայն... անանկ
ստեղն մը ձայնեցիք որ ես ձայնելու ժամանակ չունեցայ:

ՎԱԼ. Շատ լաւ կը յիշես Սողոմոն իմաստունին
մէկ պատու էրր. Ավ որ ականջով չի լսէր, կրնակով կը
զսէ. Քայց ես ձեռնելու մանկավարժ չեմ Տիկինները և օր-
փորդները իրենց յատուկ պատժներ կունենան... անա-
այս լրամ խայտատակո թեանդ փոխարէն տասն անգամ
սենեակները պիտի աւչես և տասն անգամ ալ կահկա-
րասիններուն փոշիները պիտի առնես, հասկցա՞ր...

ՄԱՐԿ. (Մեկուսի) չխտուած և չտեսնուած բան
(բարձր) գոնէ Տիկին:

Տիկին. (Ընդմիջելով) գոնէ մոնէ չեմ զիտեր ես, ե-
թէ օրը հազար անգամ ալ բսեմ պարտիս ընելու (նոյն
միջոցին Մարկոս վեք կը ցատէ. Տիկինը դրամ երկարե-
լով) հոս նայէ՛ առ այս դրամը օխա մը չուրիայ և օխա
մըն ալ գառնուելի միս առ. քեզ տեսնեմ աչքդ լաց
նայէ որ միւր հոտած շառնէս...

ՄԱՐԿ. ատիկայ հասկցայ սակայն ..

ՎԱԼ. Սակայն ի՞նչ...

ՄԱՐԿ. Լուրիաին որ մէկ տեսակը առնեմ. օթէգ
մը չէնէ թարմ մը...

ՎԱԼ. (Բարկութեամբ) ծօ՛ խայտառակ աւելորդ
խօսքեր չեմ ուզեր քեզի ինչ որ կրսեմ ան ըրէ. ո՛ն գնա
բսածներս գործադրէ:

ՄԱՐԿ. (Ժողովուրդին դառնալով) խօսք ալ չըս-
ուիր որ ըսես... (կերայ)

Տ Ե Ս Ի Լ Գ.

ՎԱԼ. (Առանձին) ամա՛ն... ամա՛ն... ալ կը բա՛-
ւէ ինչ որ քաչեցի ասոնց ձեռքէն եթէ ամուսինս գայ
ամէն բան պիտի պատմեմ իրեն (գեպի պահարան մօտե-
նալով բուրային տուփը կը բանայ ապա) այս ի՞նչ է,
օ՞ւր է ասոր մէջի բուրբան, հիմայ ի՞նչ պիտի ընեմ
երբ ամուսինս գայ և այսպէս խանոսփնդոր վիճակի մը
մէջ տեսնէ ինձի (կը պոռայ) Սիրանու՛ւշ (ձայն չկայ) քս
աղջիկ քեզի եմ...

Տ Ե Ս Ի Լ Դ.

ՍԻՐԱՆ. (Զարուայած ցեռս գալով) Ի՞նչ կ'ս, տի-
կին, ինչ կրչա՞ք...

ՎԱԼ. Ինչ պիտի ըլլամ, բոլոր ձեր խայտատակու-
թիւններն են որ կր քաշեմ... քառասուն անգամ Սի-
րանուչ պիտի պոռանք որ լսես... (խօսել փոխելով) դուն
այսօր այս պահարանը բացի՞ր և կամ ուրիշին բանալի
տես՞ր.

ՍԻՐԱՆ. (Շուարած) ես չի բացի Տիկին սակայն
Մարկոսին բանալի տեսայ...

ՎԱԼ. Վա՛յ անպիտանը տեսնենք ինչ իրաւունք ու-
նի ի՞մ պահարանս բանալու, անպատճառ ինք առած
ըլլալու է... (դուրս կելլէ)

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՍԻՐԱՆ. (Առանձին) այլես տիկինս չափը սահ-
մանը անդուց. ամէն բանին պատրուակ մ'ըն է կ'օտեղ-
ծէ... բայց եկուր տես որ՝ իրեն գործած բոլոր գործե-
րը իբրև պատրուակ հաշիւի չառնէր: (Կսկսի պսսիլ,) շիտակը շատ կը զարմանամ սա մեր տիկնոջը վրայ, ինք
ամուսնացած, տարիքը քառասուն. ելեր բուտրայ կը
քսուի. թորմած շրթունքներուն կարմիր պոյս կը քսէ,
յծնքերը սեւաներկ կը ներկէ, յետոյ կ'սկսի մօտալը
հագուստներ հագնիլ, մօտալը գլխակներ դնել, շարլստօն
կոշիկներ հագնիլ, այս բոլորը ընելէ վերջ անգամ մը
սանկ (ծելը ընելով) հայելիին կը նայի, յետոյ կուգայ
ինծի կը հարցնէ թէ ինչպէս է, (խնկալով), հարկաւ ես
ալ գեղեցիկ ես, աղւոր ես պիտի ըսեմ, որ աչքը մըտ-
նեմ... բայց իրականութիւնը նայիք նէ գնչուի թա-
գուհիէն տարբերութիւն մը չունի... (Կսկսի պսսիլ ա-
պս ճարուևակելով) հոպս ամուսինը հարցնէք նէ, կոչտ
ու կոպիտին մէկն է... ամօթ չըլլայ ըսելիքս, սանկ
ցցուած փոր մը բնի, հասակը Զաքէասի հասակէն ոչ

մէկ տարբերութիւն. ամէն անգամ զինքը տեսնելու խըն-
դուքս կը բռնէ... ինք այնքան գեր է որ դեռ անցեալ
օր անկողնին մէջ պոռկած միջոցին իր ծանրութեամբը
մաճակալին երկաթները կտարեց. ինչ որ է, եղածը ե-
ղած է պարապ խօսքերը մեր փորը չեն կշտացնէր, հի-
մայ ինչ պիտի ընէինք մենք (մտածելով) հա, մեր աչխս-
տութիւնը պիտի շարունակէինք՝ ուրեմն շարունակենք:

Տ Ե Ս Ի Լ Զ.

ՎԱԼ. (Ներս կը մտնէ բարկութեամբ սեղանին վրայի
գիրքերը տակն ու վրայ ընելով) խայտատակներ ձեզի,
դո՛ւք պիտի կործանէք զիս... անպիտանը չուկայ զըր-
կեցի, դեռ պիտի գայ, ով գիտէ որ գետնին տակ անձ-
ները մեխանան դացած, տիւզը ձեռքը՝ կել քէֆիմ կը
կանչէ կոր, եթէ էրիկ մարդ ըլլայի ջարդ ու փշուր կ'ը-
նէի այդ անպիտանին սակարները:

ՍԻՐԱՆ. (Մեկուսի) արդէն էրիկ մարդէն ինչ տար-
բերութիւն ունիս որ...

ՎԱԼ. Սիրանուչ, գաւաթ մը ջուր բեր ինծի, սիրտս
կը գոցուի կոր...

ՍԻՐԱՆ. Ամենայն սիրով, (մեկուսի) բերանդ գոցուի
նէ աւելի լաւ չըլլար արդեօք: (կերթայ)

Տ Ե Ս Ի Լ Է.

ՎԱԼ. (Մեկուսի) կէսօրը կանցնի դեռ միտը պիտի
բերէ, լուրիսն պիտի մաքրէ և տասն անգամ ալ սեն-
եակները պիտի աւլէ, (ծնո՞ւերը վեր առնելով) Տէր
Աստուած դուն համբերութիւն տուր որ կիրք չնլլեմ:

Տ Ե Ս Ի Լ Ը.

ՍԻՐԱՆ. (Ներս կը մտնէ ձեռք գաւաթ մը բռնած)
Անամօթ քեզի այս է քու սորված անտեսապիտութիւնդ.

դարձեալ ԱՔԷ՛ն պիտի սկսինք բացատրել ձեզի. շուտ
ես վերադարձուր... (կր ճանի, կուգայ):

Տ Ե Ս Ի Լ Ք .

ՊՕՂՈՍ (Ներս կը մտնէ ձեռքը գաւազան մը բռնած
տկնոցաւոր. կնկանը վիճակը տեսնելով) Խնչ ունիսՎա.
լանդինս, ինչո՞ւ յուզուած կը տեսնեմ քեզի...:

ՎԱԼ. Ինչ պիտի ունենաս, բոլոր այս անպիտանե-
րուն երեոէն է որ կը քաշեմ:

ՍԻՐԱՆ. (Մեկուսի ժողովուրդիկի դառնալով) Կը
տեսնէք ստախօսը չամչնալով սուտ ալ կը խօսի ար-
դեօք մենք իրեն ի՞նչ քրած ունի՞ք որ:

ՊՕՂՈՍ: Հոգ՛ չէ սիրելի կինս, այդ տեսակ չնչին
եղելութիւններուն համար ինքզինքդ մի չարչարէր:

ՎԱԼ. Ինչպէս թէ չը չարչարեմ ասոնք ինծի ողջ
ողջ գերեզման պիտի խոթեն, խօսքս մտիկ չեն ընելը
ըսած պատուէրներուս ականջ չեն կախէր քսոտասուն
անգամ Սիրանուչ պիտի կանչենք որ (ցուցնելով) օրիոր-
դը ձայնէ...:

ՊՕՂ. Վնաս չունի Վալանդինս մըսս չունի ատանկ
ցնորած բաներուն ականջ մի կախեր:

ՎԱԼ. Տես՝ Մարկոսը շուկայ զրկեցի կէսօրուայ
դնուսները կատարելու համար. դեռ պիտի դայ ասոնք
քաշուելիք բաներ չեն պարոն Պօղոս:

ՊՕՂ. Ինչ բնենք, առնենք փողոց նետենք, որք են
ըսելով կը պահենք...:

ՎԱԼ. այ՛ո՛, բայց քիչ մըն ալ պէտք է զթան մեր
վրայ:

ՊՕՂ. Համբերութիւնը կեանք է սիրելի կինս:

ՎԱԼ. Բայց կարեւորութիւն չի տալն ալ՝ ամե-
նամեծ փորձանքն է սիրելի ամուսինս (Ոսֆի ձայնեք կը
լսուին) նոյն ինքն ըլլալու է...:

Տ Ե Ս Ի Լ Ք .

ՄԱՐԿ. (Ներս կը մտնէ ձեռքը կողով մը բռնած,
ապա) Հրաժանդ կատարեցի Տիկին Վալանդինս:

ՎԱԼ. Ան չէ ամձա՛ մինչեւ հիմայ ուրտեղերը կը
թափառէիր:

ՄԱՐԿ. Մասվաճառներուն շուկան կը թափառէի
Տիկին...:

ՎԱԼ. Տես ժամը չորս կը զարնէ 10 ժամ է ի՞նչ
գործ ունէիր մասվաճառներուն քով...:

ՄԱՐԿ. Վաճառականութիւն կ'ընէի Տիկին...:

ՎԱԼ. Աս ինչ երկար վաճառականութիւն է եղեր
բրածդ որ, 10 ժամ է չի կրցիր լրացնել, անպատճառ
սիրուհիդ տեսնելու գացիր այնպէս չէ, և կամ ալ սըր-
ճասանէն տիւզ մը քաշելու...:

ՄԱՐԿ. (Շուտաւ) Հաւատացէք Տիկին բան ալ...:

ՎԱԼ. Լու՛, լու՛ անամօթ՝ ւերջի հարցնելու պէտ-
քութիւն չունիմ (խօսելը փոխելով) հո՛ս բեր տեսնեմ մի-
սը (հոտօտելով) ս՛ւ՛՛՛՛՛, ուտուելիք բան չէ Աստուած
իմ. էչուրէշ կը նմանի (գետին նետելով) ծօ՛՛ խայտառակ
առած ժամանակը վրան չնայեցա՞ր, աչքդ չի բացե՞ր...:

ՄԱՐԿ. (զողպողալով) Թէև Տիկին ա...ա...:

ՎԱԼ. Հոս բեր տեսնեմ լուրիան (նայելով) վա՛յ
անամօթ խայտառակներ վա՛յ, ծօ՛՛ անպիտան ես՝ քեզի
չըսի որ... օթէ՛ք Ֆասուլիս առնես:

ՄԱՐԿ. (բսելով) Տիկին դեօք չըսեք որ...:

ՎԱԼ. (ընզմիջելով) Լու՛... լու՛, անամօթներ ձեզի՛
այլեւս չափը սահմանը անցուցիք դեօք այս ամուսինէ
վերջ տեղ գտէք գացէք հոն աշխատեցէք...:

ՊՕՂ. (Նայն միջոցին դրամներ կը հսկե՛ գրպսնե՛ն
կնոջը երկարելով) առ այս գրամները գգրօցը դիր որով-
հետեւ վաղը կարգ մը հաշիւներ ունիմ մաքրելիք...:

ՎԱԼ. (Երամները տեսնելով կ'սկսի խնդալ ապա)
Որքա՛ն չաա գրամ... (կառնէ կը ճանի գգրոցին մեշ կը
դնէ):

ՍԻՐԱՆ. (Նալեյով ետեւէն) Բէ՛Քը կուգայ հէ՛, կի-
ցիր զուն ես քու զլիսուդ խաղ մը խաղամ այն ասին
ուզես վտարէ ուզես մի վտարէր...

ՄԱՐԿ. (Մեկուտի) չամշնալով ալ կը խնդայ անե-
րեսը բայց ասիկա լաւ ըմբոնէ տիկին Եթէ ես այդ գրամ-
ները առնե ու վրէժի Ապպասիա չառաջնորդեմ ինծի ալ
Մարկոս չանուանեն... (բարձր ուրիշ բան մը...)

ՊՕՂ. (Բարկուքեա Բը) ուրիշ ըսելիք բան չունիմ:
կորսուեցէք տեղերնիդ հանգստացէք... (կերթան)

ՊՕՂ. (Կնոջը) քալէ վաղանդինս քալէ ժամը Գր
կը զարնէ այսօր կ'երևի շատ յուզուած ես ել երթանք
հանգստանանք:

ՎԱՂ. այո՛, երթանք հանգստանանք: (կերթան)

(Բեմին լոյսերը կը մարին. խաւար կը տեսնուի կես
վայրեան յետոյ երկու հոգի, մին բեմին աչկովի դռ-
նէն իսկ միւսը բեմին ձախ կողմի, ձեռքերին մէյ մէկ
վառած առանցքի բռնած ներս կը մտնեն առանց իրա-
ու միտք հասկնալու).

ՍԻՐԱՆ. (Մարկոսը տեսնելով շուտաւ) Հոս ի՞նչ
գործ ունիս Մարկոս...

ՄԱՐԿ. Ոչինչ Սիրան... ֆասուլիաները ժողովու-
եկայ, բայց ժողուուած դտայ...

ՍԻՐԱՆ. Շատ լաւ ուրեմն գիշեր բարի...

ՄԱՐԿ. Գիշեր լոյս բարի: (կերթան)

Գարձեալ բեմը առանցին: Բիշ մը յետոյ նուրս կե-
տեսիս, իրար տեսնելով ետ կը փառուին այս անգամ Սիրան
ներս մտնելով կ'սկսի մամը ձեռքը քշիլ...)

ՄԱՐԿ. Հոս ի՞նչ գործ ունիս Սիրան:

ՍԻՐԱՆ. Ոչինչ Մարկոս, սանտրս կորսուեր է տէ
առի փնտռելու ելայ, իսկ զուն Մարկոս...

ՄԱՐԿ. Ա՛՛քա Սիրանուշ, չես գիտեր քունս վա-
խէր է տէ ան փնտռելու ելայ, տեսնենք պիտի կարե-

նա՛մ գտնել... (կսկսի փնտռել, ապա զգրոցին մտնելով
բանայ կը փորձէ:)

ՍԻՐԱՆ. Ի՞նչ կ'ընես Մարկոս, ձգէ աստուք:

ՄԱՐԿ. Ինչու պիտի ձգեմ եզեր...

ՍԻՐԱՆ. Ձգէ կ'ըսեմ...

ՄԱՐԿ. Ձգեմ քի զո՛ւն առնես հէ՛...)

ՍԻՐԱՆ. Ո՛չ զուն պիտի առնես, ո՛չ ալ ես...

ՄԱՐԿ. Հասցա ո՞վ պիտի առնէ:

ՍԻՐԱՆ. Աստուած դիտէ ու պիտի առնէ...

ՄԱՐԿ. (Բանալով) Հէ՛ ես պիտի առնեմ...

ՍԻՐԱՆ. (Գոցելով) ո՛չ, զուն չի պիտի առնես [ձեռ-
քի մամը Մարկոսին յետոյ կը բռնէ: Մարկոս արտակ
վար կը ցատէ, Սիրանուս կ'առնէ դրամները:]

ՄԱՐԿ. Քա՛ աղջիկ ձգէ կ'ըսեմ, ամէն ատեն կա-
տակ չըլար...

ՍԻՐԱՆ. Ատանկ մալաքա չիկայ, աստուք իմա են
պէտք է որ ես առնեմ:

ՄԱՐԿ. (Կնկիրը աղեկութեան տեսնելով) Քանի որ
այդպէս է եկուր կէտուակէս ըլլանք:

ՍԻՐԱՆ. Ի՞նչ ըսիր կէտուակէս ըլլանք մէյ մըն ալ
ըսէ տեսնեմ...

ՄԱՐԿՈՍ. Քանի որ այդպէս է քեզի ասանկ կը
վայելէ. (ձեռքին մամը սեղանին վրայ կը դնէ Սիրանու-
սին վրայ կը յարձակի դրամները կը փառէ. Սիրանուս չի-
տար համար բարձր եւ սուր նիշեր կ'արձակէ այս
աղմուկներէն երկ կնիկ իրենց գիտեանցներոյ ներս կը
մտնեն, Պօղոս փոքր շփելով եւ երբեմն ալ խոկալով դողա-
լով: Բեմին լոյսերը կը վառին:

ՊՕՂ. (Զարմացած) Վ՛՛՛՛՛ զլիսուս մենք հոս գողեր
կ'ապրեցնենք եզեր լուր չունինք, (Մարկոսին) ձօ՛
Մարկոս ասանկ տեսնելու էի քեզի:

ՄԱՐԿ. (Շուրջի գայով) ես չէի վարպետ Սիրանն էր:

ՊՕՂ. (Բարկուքեա) Կոտոր տեսնեմ սա դրամ-

5708-56



անյ.

78566

Գ
Ը

ներք... կեցէք գուք հիմայ, երթամ ոստիկանութեան
լուր տամ որ դայ ձերտակալէ ձեզ...

ՄԱՐԿ. (Լալազին) Ներէ ինձի վարպետ յանձաւորը
ես չեմ Սիրանուշն էր...

ՊՕՂ. Լուեցէք անասօթներ: (կ'երթայ)

ՄԱՐԿ. [Ծունդի գալով լալազին] Ախ Աստուած իմ
այս ինչ փորձանք էր եկաւ գիտուս. վայ քեզ չար սա-
տանայ... այլեւս չեմ կրնար դիմանալ. օգնութիւն
օգնութիւն... (կը մտի գետին կ'ընկայ):

(Վ. Ա. Ր. Ա. Գ. Ո. Յ. Ր.)



2013

